

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

ՆՈՐ ԳԱՐՈՒՆ.

Քեզ ըսպասող շրմընաց,
Ո՞ւր ես գալի, այ գարուն.
Գովքըդ ասող շրմընաց,
Ջուր ես գալի, այ գարուն:

Սեւ-մութ պատեց աշխարհին,
Սար ու ձոր դառան արին,
Մեզ վայ ըներեց էս տարին—
Ո՞ւր ես գալի, այ գարուն:

Բիւլբիւլը զայ՝ թող ձէն տայ,
Էլ ո՞վ պիտի քեզ խնդայ,
Էլ ո՞ր սիրտը կը թնդայ—
Ջուր ես գալի, այ գարուն:

Բիւլբիւլն էկաւ՝ վարդ չունի,
Ծաղկոցը կայ՝ զարդ չունի.
Էլ ո՞վ ա որ դարդ չունի—
Ո՞ւր ես գալի, այ գարուն:

Դու ետ ըներիր հաւքերին,
Ո՞նց տէր ընեն ըներին.
Սա՛ղ տեղ չկայ մեր երկրին—
Ջուր ես գալի, այ գարուն:

Աշուղի ըներանը փակ,
Սազ—քեամանչէն փակի տակ,
Սիրտն ա էրուում անկրակ—
Ո՞ւր ես գալի, այ գարուն:

Քեզ ըսպասող շրմընաց,
Ջուր ես գալի, այ գարուն.
Գովքըդ ասող շրմընաց—
Ո՞ւր ես գալի, այ գարուն:

Ե. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ.

ՆԻՒԹԵՐ

ԱՂՈՒԱՆԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

Մ. Կաղանկատուացու Աղուանից պատմութեան ընագրի վերայ եղած փոփոխութիւնները.

Ընցեալ 1895 և 1896 թ.-ներին Արարատի մէջ մի շարք յօդուածներով մենք նկարագրեցինք Կաղանկատուացու պատմութեան 5 ձեռագիրները, ցոյց տալով որ նոցանից միայն հետևեալ 3-ը հիմնական են.

Ա. Երկաթագիր օրինակ Մայր Աթոռիս մատենադարանի № 1682, գրուած փրկչական 1289 թուին. Այս ձեռագրից են ծագում բոլոր այն նորագոյն ընդօրինակութիւնները, որոնցից կատարուել են Պարիզի և Մոսկուայի հրատարակութիւնները.

Բ. Բոլորագիր ձեռագիր Մայր Աթոռիս մատեն. № 633 (Գէորգ. ցուց.), փրկչական 1664 թուից.

Գ. Նօտրագիր անթուական, Մայր Աթոռիս մատ. № 1721.

Բ. և Գ. ձեռագիրները, ինչպէս նաև Հ. Ալիշանի ձեռքում գտնուած մի օրինակ, որից օգտուել է նա իւր Սիսականում, պատկանում են մի խմբի, որ մենք անուանել ենք երկրորդ խումբ. իսկ առաջին խումբը միայն մի օրինակ է, այն է՝ երկաթագիրը:

Այստեղ մենք յառաջ ենք բերում այն հատուածները, որոնք եղծուած են երկաթագիր օրինակում և այդպէս ընդօրինակուած Ա. խմբին պատկանող ձեռագիր և տպագիր օրինակների մէջ, որոնց նախնական իմաստը վերականգնել կարելի է սակայն, հետևելով Բ. խմբին պատկանող ձեռագիր օրինակներին: